ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2025 թվականի N 778 - Լ

ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել սպանդանոցների կողմից խոշոր եղջերավոր կենդանիների մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի շրջանակներում բյուջետային երաշխիքների տրամադրման կարգը (այսուհետ՝ կարգ)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) բյուջետային երաշխիքները կարող են տրամադրվել առանց ապահովման լրացուցիչ միջոցների.

2) շահառուի կողմից իրականացված վարկի հիմնական գումարի մարումներն առաջնահերթ ուղղվում են բյուջետային երաշխիքներով ապահովված պարտավորությունների մարմանը.

3) սպանդանոցային գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուի խոշոր եղջերավոր կենդանիների մթերումների (գնումների) ուղղության համար բյուջետային երաշխիքները տրամադրվում են առավելագույնը 15 ամիս մարման ժամկետով.

4) բյուջետային երաշխիքների հիման վրա վճարման պահանջ կարող է ներկայացվել վարկի գծով 90 օր և ավելի ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ մինչև բյուջետային երաշխիքի ժամկետի լրանալը.

5) յուրաքանչյուր շահառուին և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի բյուջետային երաշխիքների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 14.0 մլն դրամը և բյուջետային երաշխիքի գումարը երաշխիքի ստացման համար դիմելու պահին չպետք է գերազանցի երաշխիք ստացողի ակտիվների 20 տոկոսը.

6) ծրագրի շրջանակում բյուջետային երաշխիքի տրամադրման պարտադիր նախապայման է ձեռք բերվող խոշոր եղջերավոր կենդանիների համարակալված լինելը և խոշոր եղջերավոր կենդանիների գնման գործընթացից հետո դրանց ապահովագրումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը տրամադրվող վարկերի նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

13.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ